


ք. Երևան

12.05.2021թ.

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 33/14.3/2589-2021, ՀՀ շրջակա միջավայրի 2/02.5/1102-2021, ՀՀ էկոնոմիկայի 03/1784-2021 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության և ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության, Քաղաքաշինության կոմիտեի 06/11.1/853-2021 և Կադաստրի կոմիտեի ԴՍ/836-2021 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի Հաղպատ բնակավայրի հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Ալավերդի համայնքի վարչական տարածքում գտնվող.

- «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 0.06419 հա վարելահող (կադաստրային ծածկագրեր՝ 06-060-0220-0040, 06-060-0221-0026, 06-060-0221-0028, 06-060-0217-0045, 06-060-0208-0071, 06-060-0208-0072) և 0.01558 հա այլ հողատեսք (կադաստրային ծածկագիր՝ 06-060-0208-0070),
- համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 0.02737 հա այլ հողեր (կադաստրային ծածկագրեր՝ 06-060-0211-0018, 06-060-0208-0066),
- պետական սեփականություն հանդիսացող (կադաստրային ծածկագիր՝ 06-060-0655-0004) անտառային նշանակության 0.01193 հա անտառ

փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության՝ էներգետիկայի հողեր գործառնական նշանակության:

Հանձնաժողովի նախագահ՝ 

Վ. Տերտեղյան

քարտուղար՝ 

Մ. Մկրտչյան